ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2026 թվականի N 1228-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 972-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի «Ազգային անվտանգության մարմինների ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 972-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Երեք տարվա ժամկետի հաշվարկն սկսվում է «ենթակա է հավելավճար հաշվարկելու» եզրակացությունը կայացվելու օրը:».

2) 8-րդ կետը «տվյալ» բառից հետո լրացնել «կամ տվյալ պաշտոնին հավասար» բառերով.

3) 10-րդ կետում և ամբողջ տեքստում «կադրերի վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «անձնակազմի կառավարման գործա-

ռույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով, իսկ «նշելով ատեստավորման անցկացման վայրը, օրը և ժամը» բառերը փոխարինել «ներկայացնելով ատեստավորման փուլերի անցկացման ժամանակացույցը» բառերով.

4) 11-րդ, 24-րդ, 50-րդ և 61-րդ կետերում «մեկօրյա ժամկետում» բառերը փոխարինել «երեք աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

5) 12-րդ կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով.

6) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. Ատեստավորումն իրականացվում է համապատասխան պաշտոններ զբաղեցնող ծառայողների ատեստավորման հանձնաժողովի կողմից, որը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից: Հանձնաժողովի քարտուղարն ի պաշտոնե անձնակազմի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցիչն է, ով համակարգում է ատեստավորման գործընթացը և կազմակերպում ատեստավորման հարցազրույցի փուլի արձանագրումը: Հարցազրույցի փուլի արձանագրումն իրականացվում է թղթային եղանակով կամ տեսաձայնագրման միջոցով: Թղթային արձանագրությունը պահվում է մինչև ատեստավորման արդյունքների և կայացված գրավոր եզրակացության բողոքարկման ժամկետի ավարտը, իսկ տեսաձայնագրությունը՝ մեկ տարի ժամկետով:».

7) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«16. Ազգային անվտանգության մարմիններում բաժնի պետի պաշտոնից ցածր պաշտոն զբաղեցնող ծառայողների ատեստավորումն իրականացվում է Ազգային անվտանգության ծառայության տնօրենի հրամանով ձևավորված հանձնաժողովների կողմից:».

8) 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«17. Սույն կարգի 16-րդ կետում նշված հանձնաժողովները ձևավորվում են ազգային անվտանգության մարմինների ծառայողների գլխավոր կամ ավագ խմբերի պաշտոններ զբաղեցնող առնվազն 4 ծառայողից, իսկ հանձնաժողովների նախագահներ են նշանակվում Ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալները, որոնք հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են ի պաշտոնե:».

9) 23-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Անձնակազմի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը սույն կետով նախատեսված արձանագրությունը երկօրյա ժամկետում գրությամբ ուղարկում է ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում՝ ստուգարքի փուլին մասնակցող՝ տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ու ստուգարքի փուլը չհաղթահարած առանձին պաշտոններ զբաղեցնող ծառայողների հավելավճարի վճարումը դադարեցնելու համար:».

10) 27-րդ կետից հանել «և պատասխանների ձևաթղթի լրացման կարգը» ու «և թեստային առաջադրանքները» բառերը.

11) 29-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«29. Տեսաձայնագրությունները պահվում են մեկ տարի ժամկետով:».

12) 50-րդ կետում՝

ա. «առանձին» բառը փոխարինել «համապատասխան» բառով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Անձնակազմի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը սույն կետով նախատեսված արձանագրությունը երկօրյա ժամկետում գրությամբ ուղարկում է ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում՝ թեստավորման փուլին մասնակցող՝ տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ու թեստավորման փուլը չհաղթահարած ծառայողների հավելավճարի վճարումը դադարեցնելու համար:».

13) 52-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«52. Հարցազրույցի փուլին ներկա են լինում ատեստավորմանը մասնակցող համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողը և ատեստավորման հանձնաժողովը: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ անձնակազմի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման կողմից ապահովվում է նաև ատեստավորմանը մասնակցող

համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի կամ նրա կողմից լիազորված՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող այլ անձի ներկայությունը:».

14) 53-րդ կետը «մասնագիտական» բառից հետո լրացնել «պատրաստվածության աստիճանը» բառերով.

15) 55-րդ կետում՝

ա. «կայացվում են» բառից հետո լրացնել «բաց քվեարկությամբ՝» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝

«Հանձնաժողովի քարտուղարը քվեարկությանը չի մասնակցում:».

16) 58-րդ կետում «պատճեններն» բառը փոխարինել «պատճենները գրությամբ» բառերով, «ֆինանսների կառավարման» բառերը՝ «ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման» բառերով.

17) 61-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հանձնաժողովի քարտուղարի կողմից ատեստավորման հարցազրույցի փուլի ավարտից անմիջապես հետո ապահովվում է ատեստավորմանը մասնակցած համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողին ատեստավորման հարցազրույցի փուլի արդյունքներով ատեստավորման հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությանը ծանոթացնելու գործընթացը, որը հավաստվում է ատեստավորմանը մասնակցած համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողի ստորագրությամբ:».

18) 63-րդ կետը «անգամ» բառից հետո լրացնել «՝ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան,» բառերով.

19) 66-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«66. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող ծառայողների հերթական ատեստավորումը կազմակերպելու նպատակով, սույն կարգի 4-րդ կետով սահմանված եռամյա ժամկետը լրանալուց չորս ամիս առաջ անձնակազմի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը կազմում է ատեստավորման ենթակա ծառայողների անվանացուցակ և

ատեստավորման ժամանակացույց և գրությամբ ուղարկում համապատասխան ստորաբաժանումներ: Անվանացուցակում ընդգրկված ծառայողների ատեստավորման գործընթացը պետք է ավարտվի ոչ ուշ, քան սույն կարգի 4-րդ կետով սահմանված եռամյա ժամկետի ավարտը:».

20) լրացնել հետևյալ բովանդակությամբ 66.1-ին կետով՝

«66.1. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ ատեստավորմանը մասնակցած համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողի վերաբերյալ ատեստավորման արդյունքում «ենթակա չէ հավելավճար հաշվարկելու» եզրակացություն կայացվելու դեպքում, հավելավճարի վճարումը դադարեցվում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված եռամյա ժամկետը լրանալու օրվանից, իսկ համապատասխան պաշտոն զբաղեցնող ծառայողը նոր ատեստավորում անցնելու համար կարող է դիմել սույն կարգի 63-րդ կետով սահմանված կարգով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ